Հաստատված է՝
«Մեհրաբյանի անվան բժշկական
քոլեջ»-ի մանկավարժական խորհրդի
«04» 07 2022թ. նիստում
տնօրեն՝ Լ.Գ.Մեհրաբյան

ԿԱՐԳ

«Մեհրաբյանի անվան բժշկական քոլեջ» ՍՊԸ բժշկական քոլեջի գրադարանի գործունեության

1. Ընդհանուր դրույթներ
1.1. «Մեհրաբյանի անվան բժշկական քոլեջ» ՍՊԸ բժշկական քոլեջի (այսուհետ Քոլեջ) գրադարանը (այսուհետև՝ գրադարան) հանդիսանում է Քոլեջի կառուցվածքային ստորաբաժանումներից մեկը:
1.2.Գրադարանը գործում է «Մեհրաբյանի անվան բժշկական քոլեջ » ՍՊԸ կանոնադրության և սույն կարգի հիման վրա:
1.3. Գրադարանի գրականությունը և անշարժ գույքը հանդիսանում են Քոլեջի սեփականությունը:
1.4. Գրադարանից օգտվելու իրավունք ունեն Քոլեջի աշխատակիցները և ուսանողները: Կողմնակի անձինք գրադարանից կարող են օգտվել միայն գրադարանավարի գրավոր թույլտվությամբ:
1.5. Գտնվելու վայրն է ք.Երևան, Կոմիտասի 51:

2. Գրադարանի հիմնական խնդիրները և գործառույթները
2.1. Գրադարանի հիմնական խնդիրներն են՝
2.1.2. Քոլեջի ուսումնական և գիտական գործունեության համար անհրաժեշտ գրադարանային և տեղեկատվական միջոցների ապահովում,
2.1.3 Քոլեջում գիտական գրականության պահպանում,
2.1.4. Գրադարանային ծառայությունների ընդարձակում, ավտոմատացում, էլեկտրոնային գրադարանի ստեղծում,
2.1.5. Միջազգային գրադարանային ծրագրերին մասնակցություն:

3.Գրադարանի հիմնական գործառույթները
3.1.Գրադարանի հիմնական գործառույթներն են՝
3.1.2. ընթերցողների գրանցում՝ յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբում վերագրանցման սկզբունքով,
3.1.3. արդիական գրականության և տեղեկատվական նյութերի, ինչպես նաև գիտական ամսագրերի մշտական թարմացում,

3.1.4. յուրաքանչյուր ընթերցողին առանձնակի օգնության տրամադրում՝ գրականության ընտրության և որոնման աշխատանքներում,
3.1.5. գրադարանային ֆոնդերի խմբավորում, քայքայված գրքերի և այլ տեղեկատու միջոցների զտում և դրանց փոխարինումը նորացված գրքերով և տեղեկատու այլ միջոցներով,
3.1.6. գրքերի ցուցադրությունների և գրական միջոցառումների կազմակերպում,
3.1.7. գրադարանային ծառայությունները Քոլեջի պահանջներին համապատասխանեցնելու նպատակով այլ գրադարանների և ՀԿ-ների, գիտատեխնիկական տեղեկատվական այլ հաստատությունների հետ սերտ համագործակցության հաստատում,
3.1.8. գրքերի կոդավորում, թվայնացում,
3.1.9. ըստ մասնագիտությունների և կուրսերի՝ ուսումնական պլաններին համապատասխան էլեկտրոնային պարբերականների ստեղծում:

4.Գրադարանի կառուցվածքն ու կառավարումը
4.1.Քոլեջի գրադարանը ներառում է հետևյալ կառուցվածքային տարրերը.
4.1.1 համալրման բաժին,
4.1.2. գրապահոց,
4.1.3. բժշկական գրականության բաժին,
4.1.4. տնտեսագիտական գրականության բաժին,
4.1.5. օտար լեզուների ուսուցման գրականության բաժին,
4.1.6. գեղարվեստական և այլ գրականության բաժին,
4.1.7. ընթերցասրահ:
4.2. Գրադարանի ղեկավարումը անմիջականորեն իրականացվում է գրադարանի պատասխանատուի միջոցով, որը ենթակա է Քոլեջի տնօրենին:
4.3. Գրադարանի պատասխանատուն անմիջականորեն նշանակվում և ազատվում է Քոլեջի տնօրենի հրամանով:
4.4. Գրադարանի բոլոր բաժինները ղեկավարվում են գրադարանի պատասխանատուի կողմից:
4.5. Գրադարանի պատասխանատուն իր լիազորությունների շրջանակներում պատասխանատվություն է կրում իր գործունեության համար:
4.6. Գրադարանի պատասխանատուն բացի գրադարանային գործառույթներից կազմակերպում է նաև ցուցահանդեսներ, անվանի մարդկանց հետ հանդիպումներ, գրականագիտական քննարկումներ:
4.7. Գրադարանի պատասխանատուն ավելորդ կամ չօգտագործվող գրքերը հանձնում է մակուլատուրա:

«Մեհրաբյանի անվ. բժշկական

քոլեջ ՍՊԸ բժշկական քոլեջի

ուսումնական մասի վարիչ՝ /Հ. Ա. Բաբայան/